Կոստանդնուպօլիս, եւ եգիտ զերկուս վարդապետս իւր զՕնոփրիոս և զՍարգիս, զորս կապանօք ածեալ էին զօրականքն 'ի Պրուսայէ · և տեսեալ զնոսա զերծեալս անվընաս, ուրախ եղեւ և եկեալ նստաւ առ ժամանակ մի յեկեղեցւոջ Ս · Լուսաւորչին, ուր յաճախէին բնակիչք Կոստանդնուպօլսոյ մեծամեծք և փոքունք իբրեւ առ Կաթուղիկոսն իւրեանց, և խրախանային 'ի տեսութեան նորա ։ Ապա 'ի դժկամակիլ Յովհաննու Պատրիարքի մայրաքաղաքին եւ ամբաստանել նաեւ առ Եպարքոսն, էառ զնա 'ի տուն իւր Ապրօ Չէլէպի, եւ գնացեալ առ Իշխանն յայտ արար նմա՝ թէ Եղիազար ոչ խառնի յիշխանութիւն Պատրիարքութեան Յովհաննու, այլ բանսարկուք ասէ՝ յօդեն զայնպիսի զրպարտութիւնս, եւ էառ հրաման՝ զի մի ոք իշխեսցէ վարել զնա 'ի քաղաքէն, և դադարեաց 'ի տուն Ապրօյի ամիսս 6 ։

Այլ մինչեւ եկեալ էր Եղիազար 'ի Կոստանդնուպօլիս, եհաս լուր յԵրուսաղէմ, թէ առեալ է նա իշխանութիւն խնամակալութեան Երուսաղէմի, և թէ գայ այդր իբրեւ Կաթուղիկոս ։ Եւ զի նորոգ ժամանեալ էր անդ յայնժամ Յակոբ Կաթուղիկոս՝ խորհուրդ ետ նմա Մարտիրոս վարդապետ՝ զի ջանասցի առնուլ նախ 'ի ձեռաց Եղիազարու զիշխանութիւն խնամակալութեան, և ապա դիւրաւ լիցի մեզ ասէ խափանել և զԿաթուղիկոսութիւն նորա ։

Զայս հաւանեցուցեալ 'ի միտս Կաթուղիկոսի՝ և առեալ ընդ իւր գիր ամբաստանութեան 'ի վերայ Եղիազարու՝ վկայութեամբ Աստուածատուր Պատրիարքի և դատաւորացն Երուսաղէմի, փութացաւ և եկն 'ի Կոստանդնուպօլիս, և կամէր ելանել վերստին յատեան Եպարքոսին, գործակից իւր արարեալ զԹլթլեանս և զՋահուկեանս եւ զարեւելցիս, ընդ որս և զԱնդրիաս երեց մի, որ 'ի ռամկաց ՃԷՀԷՆՆԷՄ ՔԷՐՓԻՃԻՆԻ կոչիւր ։ Իսկ ոմանք յԵղիազարեանց եկեալ առ Մարտիրոս յորդոր եղեն նմա՝ յետս կալ 'ի կըռուոյ անտի, և մի՛ գրգռել կրկին զաղմուկ չփոթի ։ Եւ Ապրօ յղեաց զԵրեմիա Չէլէպի հանդերձ թղթով երթալ խօսիլ ընդ Մարտիրոսեանս, և նորա եկեալ հաճեցոյց նախ զՄիրզէ և զԽօսրով, և ապա յորդորեաց զՄարտիրոս գալ առ Ապրօ՝ և խօսիլ բանս խաղաղութեան ։